

ՕԼԳԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

«ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ» ԵՐԿՈՒ ՍՐԲԱԿՐՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

I

Կորյունի «Վարք Մաշտոցի» ընդարձակ խմբագրությունը պարունակում է այնպիսի հատվածներ, որոնք, բառացի թարգմանված լինելով գրաբարից հին հունարեն, ստանում են քերականական կանոնավոր կառուցվածք եւ ավելի պարզ եւ բնական իմաստ: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ «Ընդարձակ Կորյունում» հունարեն ինչ-որ բնագրի կամ բնագրերի հետքեր են պահպանվել: Մեր ենթադրությունը ավելի հիմնավորված կլիներ, եթե այդ բնագրերը որեւէ կերպ վկայված լինեին այլ աղբյուրներում: Եվ իրոք, կարելի է մատնանշել այդպիսի առնչություններ «Ընդարձակ Կորյունի» երկու վերականգնված հատվածների եւ Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» մեջ վերապատմվող «Կորյունի» միջեւ:

Առաջին հատվածի խնդիրը արդեն վաղուց ծանոթ է բանասերներին: «Ընդարձակ Կորյունի» տեղիի քննական բնագիրը հետեւյալն է¹.

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն (*variae lectiones: b* որում | ճա որումն) ասորուց եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիել անուն կոչեցելոյ որոյ յանկարծ ուրեմն [գտեալ] (*variae lectiones: ճա/ճբ գրեալ | C լուս. էր գր[ե]ալ / abdeլ շիք*) նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի:

Դեռեւս 1928 թվին Հր. Աճառյանը վերլուծության է ենթարկում տեղին եւ գալիս այն, կարծես թե անխուսափելի եզրակացության, որ բնագիրը աղավաղված է, եւ «յանկարծ ուրեմն» բառախմբից հետո պետք է ինչ-որ բայ գետեղված լիներ: Այս բայը, նրա կարծիքով, «գտեալ»-ն է, որն եւ հաստատվում է հաջորդ տողի մեջ հանդիպող «գրելոյն ի Դանիելէ» արտահայտությամբ, որն, իր հերթին, շտկելի է «գտելոյն» ձեւով, քանի որ պարբերության ավարտին կա «յանկարծագիտն» բառը, «ուր», Հր.Աճառյանի խոսքերով, «առաջին

¹ Գրչագրերի տառանիշերը գործածվում են ըստ Մ. Աբելյանի հրատարակության՝ Կորյուն, Վարժ Մաշտոցի, Երևան, 1941, (այսուհետեւ՝ Վարժ), նույնը եւ Կորյուն, Վարժ Մաշտոցի, իմբ. է. Ա. Պիվազյանի, Երևան, 1981 (այստեղ՝ Կորյուն, 1981), տե՛ս ծան. 4:

խոսքին յանկարծ եւ գտեալ բառերը միացած են»²: 1941 թվին նույն տրամաբանությամբ Մ. Աբեղյանը սրբագրում է «Ընդարձակ Կորյունի» բնագիրը, ծանոթագրութեան մեջ ավելացնելով Հր.Աճառյանի մշակած կովաններին եւս մեկը, եւ ծանրագույնը՝ ձեռագրային վկայութիւններ³ (որոնք վերստուգվեցին անձամբ հրատարակչի կողմից 1981թ. վերահրատարակութեան համար⁴): Ձեռագրերի տվյալները, առաջին հայացքից, ամրապնդեցին սրբագրման հիմքը՝ պարզվեց, որ իրոք գոյութիւն ունի ձեռագրերի մի խումբ, որը «յանկարծ ուրեմն» բառերից հետո ունի «գրեալ» բայածէւը⁵, որից արդեն դժվար չէր ստանալ վարկածով պահանջվող «գտեալ»-ը՝ բավական էր ենթադրել, որ նախագաղափարի երկաթագիր Տ-ի ներքեւի մասը անընթեռնելի է դարձել հետագա ընդօրինակողների համար⁶:

Աճառյան-Աբեղյանի սրբագրումը ընդունվեց հայագետների կողմից իբրեւ անառարկելի ճշմարտութիւն: Եվ դա հասկանալի է, քանի որ բանասերներին եւ պատմաբաններին առաջին հերթին հուզում էր «դանիելյան» եւ «մաշտոցյան» գրերի փոխհարաբերութեան հարցը, եւ ո՛չ քննական բնագրի մշակման սկզբունքները: Մինչդեռ տվյալ պարագայում գիտնականների տրամաբանութիւնը տարակուսանքի բավական տեղիք է տալիս: Նախ, որքան էլ Տոնականների բնագիրը, որի հիման վրա կատարվել է մեզ հետաքրքրող տեղիի սրբագրումը, հեղինակավոր լինի իր հնությամբ եւ նմանվի «Ընդարձակ Կոր-

² Հր. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 72-73:

³ Վարժ, էջ 20, 42, ծան. 58:

⁴ Կորյուն, 1981:

⁵ Ա. Մաթետոյանի «Վարժ Մաշտոցի» բոլոր երեք խմբագրությունների հրատարակումից հետո անհրաժեշտ եղավ եւս մեկ անգամ ստուգել մեզ հետաքրքրող տեղիի ընթերցվածները, քանի որ հրատարակչի հայտնած տվյալները հակասում են Մ. Աբեղյանի կողմից տրված նկարագրությանը: Այսպէս, Ա. Մաթետոյանը գրում է, որ սրբագրման համար հիմք ծառայած «գրեալ»-ը առկա է «Ընդարձակ Կորյունի» բոլոր ձեռագրերում, ինչպէս եւ Տոնականներում (Կորյուն, Վարժ Մ. Մեսրոպ Մաշտոցի, աշխ. Ա. Ս. Մաթետոյանի, Երեւան, 1994, էջ 152), մինչդեռ Մ. Աբեղյանը պնդում էր, որ այդպիսին բացակայում է ընդարձակ խմբագրության բոլոր գրագրերում, բացի Ը նիշը ստացած մատյանից, որում «Եր գրեալ» բառախումբը գտնվում է լուսանցում: Ձեռագրերի գնումը ցույց տվեց, որ իրավացի է, իհարկէ, Մ. Աբեղյանը: Ը (Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), 1891) գրագրում թ. 175ա «Եր գրեալ» լրացումը գտնվում է աչ լուսանցում «որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղփարեոսաց հայերէնին լեզուին» հատվածից անմիջապէս հետո՝ առանց ներմուծման նշանի եւ արված է այն նույն ձեռով, որը սրբագրումներ եւ լրացումներ է կատարել ամբողջ ձեռագրում: Ե (ՄՄ, 2639, 552ա), Ը (ՄՄ, 131, 46ա) եւ Ե (ՄՄ, 3134, 19ա) գրագրերում բայը համապատասխան տեղերում բացակայում է, իսկ Եա, Եբ (ՄՄ, 3787, 105ա, ՄՄ 3797, 117ա) «Փոքր Կորյունի» բնագրում առկա է «որոյ յանկարծ ուրեմն գրեալ» ընթերցվածը: Ի դէպ, Ա. Մաթետոյանի գրումը հապացույց «գրեալ» ընթերցվածի բերված լուսանկարը (էջ 153), ինչպէս պարզվում է բնագրերի համեմատությունից, ներկայացնում է ոչ այլ ինչ, եթե ոչ Մ. Աբեղյանին քաջ ծանոթ այս Տոնականներից մեկը:

⁶ Կորյուն, 1981, ծնթ. 58, էջ 308-309.

յունի» բնագրին, այն այնուամենայնիվ առանձին գործ է, որը ստեղծվել է եկեղեցում պարբերաբար վերծանվելու համար: Նշված նպատակը ազդել է բնագրի ոճի եւ կառուցվածքի վրա՝ պարզ է, որ եկեղեցում հավատացյալների համար կարդացվող վարքը պետք է հնարավորինս զերծ լիներ ցանկացած կրկնություններից, հավելաբանություններից, արտառոց բառերից եւ արտահայտություններից, մի խոսքով պետք է լիներ համառոտ եւ դյուրըմբռնելի: Եւ իրոք՝ «Փոքր Կորյունի» վերծանումը զբաղեցնում է մոտ կես ժամ (այսինքն՝ մի քանի անգամ ավելի քիչ ժամանակ, քան ընդարձակ խմբագրություն), իսկ ընթերցվածների բաղադատությունը ցույց է տալիս ոճը «թեթեւացնելու» միտվածություն: Այսպես, «Ընդարձակ Կորյունի» «եւ իբրեւ աւուրս բազումս անդէն ի նմին դեգերէր» բառախմբի⁷ փոխարեն Տոնականներում ընթերցվում է «եւ իբրեւ բազում անգամ անդէն ի նմին դադարէր», «ազդ առնէին ... թագաւորին»⁸ փոխարեն՝ «աստ առնէին...», «հրովարտակօք»՝ «հանդերձ հրովարտակօք»⁹: Նմանապես «նշանագիրքն ... թաղեալք եւ յարուցեալք» Տոնականներում դառնում է «նշանագիրքն ... քաղեալք»¹⁰, իսկ «առաջի արկեալ նոցա նշանագիրս» հատվածի «արկեալ»-ը փոխարինվում է «արարեալ» բառով¹¹: «Թեւամուխ միջամուխ» ծանր հնչող հավելագրությունը պարզեցվում է մեկ բառով՝ «թեւակոխ»¹², եւ իրոք դժվարհասկանալի «աշակերտեալ նմին սովորական աւետարանութեան» արտահայտությունը՝ «աշակերտել նմին աւետարանական սպասաւորութեանն»¹³ քիչ թե շատ ըմբռնելի ձեւով:

Իս նշանակում է, որ «Փոքր Կորյունը», անշուշտ ածանցված լինելով «Վարքի» ընդարձակ խմբագրությունից¹⁴, այնուամենայնիվ կարող է օգտագործվել այս վերջինը վերականգնելու համար խիստ վերապահումով այնտեղ,

⁷ Կորյուն, 1981, էջ 90, տող 2 եւ տողատակ:

⁸ Նույն տեղում, տող 12-13 եւ Կորյուն, 1994, էջ 109, տող 35:

⁹ Կորյուն, 1981, էջ 92, տող 3 եւ տողատակ: Առանց նախորդի գործիականը հավանաբար հավասար է հունարենի *dativus sociativus*՝ «համագործ տրականի» կառույցին, եւ կարող էր արհեստական թվալ արդեն վաղ հայերենում, իսկ ավելի ուշ՝ դառնալ պարզապես անհասկանալի:

¹⁰ Նույն տեղում, էջ 94, տող 3 եւ տողատակ:

¹¹ Նույն տեղում, էջ 98, տող 13-14 եւ տողատակ:

¹² Նույն տեղում, էջ 84, տող 15 եւ տողատակ:

¹³ Նույն տեղում, էջ 86, տող 14 եւ տողատակ:

¹⁴ Պարզ է, սակայն, որ ԺԳ-ԺԵ դարերի հուշարձանը կազմվել է Կորյունի ընդարձակ խմբագրության շատ ավելի հին ձեւագրերի հիման վրա, քան այսօր մեր տրամադրության տակ եղածներն են: Հավանաբար, դրանով պետք է բացատրել «Փոքր Կորյունի» ընթերցվածների մեջ Բերականական ուղագրավ տարբերակների առկայությունը, օրինակ, «-իւ» անցյալ անկատարի վերջավորությունը «-իւ»-ի փոխարեն՝ «հանաչիւ» - «հանաչիւ» (Կորյուն, 1981, էջ 90, տող 4 եւ տողատակ), «կոչիւ» - «կոչիւ» (նույն տեղում, տող 13-14 եւ տողատակ):

որտեղ բնագրի ընդհանուր իմաստը վերականգնելու բոլոր այլ միջոցները սպառված են: Անկասկած, այս պարագան գիտակցել է եւ ինքը՝ Մ. Աբեղյանը, քանի որ «ճա/ճբ», այսինքն՝ Տոնականների ընթերցվածները նա գրեթե միշտ¹⁵ բերում է տողատակը, շքնդունելով դրանք հիմնական բնագրի մեջ: Ուստի եւ «գրեալ»-ի ներմուծումը ընդարձակ «Վարքի» հիմնական բնագրի մեջ բնավ չի նշանակում, որ այս ընթերցվածքը ուժեղ է եւ նախընտրելի: Ընդհակառակն, դա պարզապես իմաստային բացը մի կերպ լրացնելու միակ միջոցն էր: Հաջորդ քայլը կատարելիս, այսինքն՝ սրբագրելով «գրեալ»-ը «գտեալ» ձևով՝ Մ.Աբեղյանն իրականում ավելի է թուլացնում առանց այդ էլ թույլ ընթերցվածքը, քանի որ այն հիմնավորում է մյուս նախադասության մեջ գտնվող «յանկարծազուտ» բառով. մինչդեռ սրբագրության «հուշված» լինելը, այսինքն՝ *lectio faciliior* վիճակի վերարտադրումը արդեն իսկ հատուկ զգուշավորություն է պահանջում: Եւ այս ամենը կատարվում է մի բնագրի նկատմամբ, որի խիստ խրթին եւ խճճված լինելու համար գանգատվում է ինքը հրատարակիչը¹⁶.

«Նա [այսինքն՝ Կորյունը] հորինում է շատ ճոռոմ, ավելորդ զարդերով եւ կրկնություններով. ինչպես ինքն ասում է, «ծաղկեցնում է»: Նրա գրածը հաճախ մութն է նաեւ անկանոն լեզվի պատճառով, պակասում են անհրաժեշտ բառեր, կամ շատ կան ամբողջ նախադասությունների փոխարինող յուրահատուկ նորահնար բարդ բառեր, այլեւ բառերի կիրառությունն ոչ մեզ ծանոթ սովորական նշանակությամբ»:

Հետեւաբար, անհասկանալի տեղին միշտ չէ, որ սրբագրման կարիք ունի: Նախ պետք է համոզվել, որ սպառված են մեկնաբանման բոլոր հնարավորությունները: Հնարավոր չէ՞ արդյոք ենթադրել, որ «յանկարծ ուրեմն նշանագիրս» բառախմբում սովորական բառերը գործածված են անսովոր իմաստով: Կամ, այլ կերպ ասած, մեզ համար սովորականը մի՞թե նույնքան սովորական է եղել միջնադարի համար:

ՆԲՂԷ բերում է «յանկարծ» բառը երկու նշանակությամբ. սովորական՝ «յանկարծ ... որ եւ յանկարծակի իբր անկարծ. անկարծելի օրինակաւ, եւ յանկարծելի ժամու. իսկոյն. իսկ եւ իսկ. յանակնկալ պահու. յանպատրաստից. ի մի վայրկեան ժամանակի» եւ հազվադեպ՝ «յանկարծ ... իցէ թէ, երանի թէ»:

¹⁵ Բացառությամբ երեք դեպքերի, որից մեկը՝ մեր ակնարկի առարկան է, իսկ մնացածները՝ բոլոր հիմնական ձեռագրերում վկայված «մարթեսցեն»-ի փոխարեն երկու բառ՝ «արծարծել մարթասցեն» (Կորյուն, 1981, էջ 92, տող 13 եւ տողատակ) եւ «զմանկունս»՝ հիմնական ձեռագրերի «մանկունս» ընթերցվածի փոխարեն (նույն տեղում, էջ 98, տող 8 եւ տողատակ):

¹⁶ Կորյուն, 1981, էջ 65:

Սակայն եւ ոչ մեկի շնորհիվ ամբողջ նախադասութիւնը բավարար իմաստ չի ստանում:

Պատկերը մի փոքր փոխվում է, երբ «յանկարծ» բառի կիրառութիւնը դիտվում է Կորյունի դարաշրջանի հեղինակների երկերում: Այսպես, պարզվում է, որ

ա) Եղիշիկ¹⁷ առհասարակ չի գործածում ոչ «յանկարծ»-ը, ոչ էլ «յանկարծ»-ով բարդված բառեր,

բ) Փալստոս Բյուզանդն¹⁸ այն գործածում է 4 անգամ, մինչդեռ «յանկարծակի» ձեւը - 8, իսկ «յանկարծօրէն» - 14 անգամ,

գ) Եղիշեն¹⁹. «յանկարծ» - 1, «յանկարծակի» - 2 անգամ,

դ) Ղազար Փարպեցին²⁰. «յանկարծ» - 5, «յանկարծակի» - 24, «յանկարծահաս» - 1 անգամ,

ե) Մովսէս Խորենացին²¹. «յանկարծ» - 2, «յանկարծակի» - 4, «յանկարծօրէն» - 3 անգամ,

զ) Դաւիթ Անհաղթի²² երկերի թարգմանութիւններում. «յանկարծ» - չիք, «յանկարծակի» - 1, «յանկարծօրէն» - 1 անգամ,

է) Ագաթանգեղոսը²³. «յանկարծ» - 8, «յանկարծակի» - 7, «յանկարծօրէն» - 2, «յանկարծահաս» - 1, «յանկարծագոյն» - 1, «յանկարծաթափ» - 1, «յանկարծակամ» - 1 անգամ. եւ, վերջապես,

ը) Կորյունն²⁴ ինքը գործածում է «յանկարծ» 2 անգամ, որից մեկը արդեն տեսանք, եւ «յանկարծագիւտ»՝ 3 անգամ:

Նախ, այս վիճակագրութիւնը ցույց է տալիս, որ հեղինակները որոշ նախապատվութիւն են տալիս ոչ թե «յանկարծ»-ին, այլ դրան հոմանիշ՝ «յանկարծակի» եւ «յանկարծօրէն» ձեւերին: Դա կարող է նշանակել, որ «յանկարծ» տարբերակը, հասկանալի լինելով հանդերձ, այնուամենայնիվ ինչ-որ չափով խորթ է եղել վաղ գրական հայերենին: Համաբարբառների զննման երկրորդ արդյունքն այն է, որ Ագաթանգեղոսը ոչ միայն միակ հեղինակն է, որ նախընտրում է «յանկարծ» ձեւի գործածումը, այլեւ ունի մի այնպիսի գործածում, որը, նախ, կապակցում է «յանկարծ»-ը «ուրեմն» մակբայի հետ, եւ, երկ-

¹⁷ Հայկական Համաբարբառ, Երեւան, 1972

¹⁸ Հայկական Համաբարբառ, Երեւան, 1974

¹⁹ Հայկական Համաբարբառ, Երեւան, 1978

²⁰ Հայկական Համաբարբառ, Երեւան, 1978

²¹ Հայկական Համաբարբառ, Երեւան, 1976

²² Հայկական Համաբարբառ, Երեւան, 1979

²³ Հայկական Համաբարբառ, Երեւան, 1973

²⁴ Հայկական Համաբարբառ, Երեւան, 1972

րորդ՝ զուգահեռ է հանդիսանում Կորյունի «յանկարծ»-ի երկրորդ կիրառությունն պարունակող տեղիի համար²⁵.

[Ագաթանգեղոս]

Որպէս զՄովսէս, որ յանկարծ ուրեմն օրէնսուսոյց հեբրայական բանակին լինէր, ամենայն մարգարեական դասուն, եւ կամ իբրեւ գյառաջադէմն Պաւղոս բովանդակ առաքելական գնդան, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանան Քրիստոսի սոյն եւ սա եկեալ հասեալ երեւեալ՝ հայաբարբառ հայերենախօս գտաւ:

[Կորին]

Յայնմ ժամանակի երանելի եւ ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում յանկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս մարգարեական դասուն, եւ յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանան Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառ հայերենախօսք գտան:

Մի կողմ թողնելով Ագաթանգեղոսի եւ Կորյունի բնագրերի փոխառնչության չափազանց բարդ խնդիրը²⁶ մենք կարող ենք այստեղ փորձել գտնել «յանկարծ ուրեմն» արտահայտության նշանակությունը, բաղդատելով հայե-

²⁵ Ագաթանգեղոս, 854 (Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանանեանց, Տփղիս, 1909, էջ 447-48): Կորյուն 1981, էջ 104, տող 10-15:

²⁶ Միայն մեզ հետաքրքրող Ագաթանգեղոսի եւ Կորյունի տեղիների բաղդատության վերաբերյալ անհրաժեշտ է բերել Ա. Տեր-Ղետնդյանի կարծիքը: Թարգմանելով Ագաթանգեղոսի հատվածը («Ինչպես Մովսէսը, որը միանգամից եբրայական բանակին օրենսուսուց էր եղել, ամբողջ մարգարեական դասի հետ եւ կամ ինչպես առաջադեմ Պողոսը բովանդակ առաքելական գնդով Քրիստոսի աշխարհակեցոյց Ավետարանի հետ, նույնպես եւ սա [Գրիգորը] գալով հասնելով, երեւալով՝ հայաբարբառ հայերենախոս դարձավ», Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երեւան, 1983, էջ 477) նա ծանոթագրում է այն հետեւյալ կերպ (նույն տեղում, էջ 524). «Սա Կորյունից փախած է, սակայն Կորյունի մատյանում հստակ է արտահայտված. «Այն ժամանակ անպայման սփանջելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հավասարակիցների ձեռքով հանկարծ միանգամից եկան հասան, հայաբարբառ հայերենախոս դարձան օրենսուսուց Մովսէսը՝ մարգարեական դասի հետ եւ առաջադեմ Պողոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցոյց Ավետարանի հետ միասին (Կորին, էջ 57)»: Կորյունի խոսքը Մովսէսի եւ Պողոսի, այսինքն՝ Հին եւ Նոր Կտակարանների հայերեն թարգմանելու մասին է, իսկ Ագաթանգեղոսը Գրիգոր Լուսավորչին է վերագրում Մովսէսին ու Պողոսին հայերենախոս դարձնելը, որն անիմաստ է»: Դժվար չէ նկատել, որ այս դատողությունը խորք լինելով Ագաթանգեղոսի մտքի ընթացքին, նաեւ վաղ բրիտոնական ֆարզության պայմաններին անձանոթ լինելու արդյունք է: Աստվածաշունչ մատյանը հայալեզու դարձնելու համար բավական էր պարզապես քարոզել այն բանավոր՝ ինչպես եւ արվում էր շատ հաճախ նույնիսկ սեփական գիր ունեցող ժողովուրդների մեջ:

րեն Ագաթանգեղոսին հունարեն բնագրի հետ²⁷: Մեր տեղին համապատասխանում է հետեւյալ հատվածին.

Ὡς γὰρ ὁ Μωϋσῆς νομοθέτης
ἐϋρεθεῖς ταῖς Ἑβραϊκαῖς παρεμ-
βολαῖς μετὰ τοῦ προφητικοῦ χο-
ροῦ καὶ ὁ παρρησιαστικώτατος
Παῦλος μετὰ τοῦ ἀποστολικοῦ
συστήματος, καθ' ὁμοίωσιν αὐ-
τῶν εἰς μέσον παρελθόν, τὸ
ζωοποιὸν κήρυγμα τοῦ εὐαγγε-
λίου τοῦ Χριστοῦ ἐπειράθη (ἐπει-
ράσθη) τῇ τῶν Ἀρμενίων γλώτ-
τη.²⁸

Ինչպես Մովսեսը մարգարեական
շուրջապարով հանդերձ եբրայական
գորագնդերի համար օրենսդիր
գտնվեց, եւ խիզախագույն Պողոսը,
առաքյալների շոկատով հանդերձ,
[այդպես եւ Գրիգորը], ի նմանու-
թյուն նրանց, դուրս գալով [ասպա-
րեզի] մեջտեղը, փորձեց [արտասա-
նել] Քրիստոսի ավետարանի կենսա-
րար քարոզը հայերեն լեզվով:

Հունարեն Ագաթանգեղոսի հատվածում առկա է երկու բայածեւ. մեկը՝
ἐϋρεθεῖς (անցյալ կատարյալի կրավորական դերբայ εὐρίσκω «գտնել» բա-
յից), մյուսը՝ ἐπειράθη²⁹ (3-րդ դեմքի եզակի թվի անցյալ կատարյալ կրավո-
րակերպ քերական «փորձել» բայից): Դրա դիմաց հայերեն տարբերակը
ունի երկու ստորոգյալ՝ «յանկարծ ուրեմն ... լինէր» եւ «գտաւ»: Առաջինը
գտնվում է նույն շարահասական դիրքում, ինչ եւ հունարենի ἐϋρεθεῖς ձեւը,
եւ նշանակութեամբ, նախադասութեան իմաստը պահպանելու համար, պետք է
հավասար լինի նրան: Ինչ վերաբերում է երկրորդ ստորոգյալին, ապա նա,

²⁷ Կցանկանայինք ձեռնպահ մնալ նաեւ այն հարցում, թե արդո՞ք հունարեն Ագաթանգեղոսն է թարգմանվել հայերենից, թե ընդհակառակը, հայերենը՝ հունարենից: Մինչ օրս մշակված կովանները գալիս են ապացուցելու, որ հունարեն բնագիրն ածանցված է հայերենից (La version grecque ancienne du livre arménien d'Agathange. Edition critique par Guy Lafontaine. Université catholique de Louvain. Institute Orientaliste. Louvaine-la-Neuve, 1973 (Publications de l'Institut Orientaliste du Louvain, 7), pp. 20-33), թեեւ զոստ տրամաբանական տեսակետից դիտվելիս, դրանք հաստատում են միայն, որ հունարեն տարբերակի հեղինակը հայկական լեզվամտածութեան կրող է եղել, եւ քաջ ծանօթ էր իր ժամանակի Հայաստանի պայմանների եւ իրադարձությունների: Ինչեւիցե, ոչինչ չի խանգարում գործածել հունարեն բնագիրը հայերենի խրթին տեղիների իմաստը պարզելու համար:

²⁸ Agathange, p. 157.

²⁹ Երկրորդ հունարեն ընթերցվածքը՝ ἐπειράσθη՝ քերական «փորձության ենթակել, գայթակղել» (սեռական հոլովի խնդրառությամբ) բայի անցյալ կատարյալի կրավորականն է, որի դասական գործածությունը կիսախտեր տվյալ նախադասության շարահյուսական կառուցվածքը: Սակայն կարելի է ենթադրել, որ ուշ, եւ հատկապես խոսակցական լեզվի մեջ քերական եւ քերական բայերի իմաստները, ինչպես եւ ձեւերը, սկսում են խառնվել. փոխվում է եւ խնդրառությունը՝ դառնալով հայցական:

Թեև զբաղեցնում է ἔπειράθη բառին համապատասխանող տեղը, սակայն արտահայտում է, ինչպես եւ առաջին ստորոգյալը, εὐρεθεις ձեւի իմաստը: Դա նշանակում է, որ հայերեն տարբերակի երկու ստորոգյալները միասին կազմում են հավելադրություն, որի երկրորդ մասը, ինչպես եւ հաճախ պատահում է հատկապես թարգմանություններում, պարզաբանում է առաջինի՝ անսովոր, արհեստական նորամուծությունը:

Ուստի պարզվում է, որ «յանկարծ ուրեմն» օժանդակ բայի հետ ինքը կարող է գործածվել իբրև հունարեն «գտնել» բայի կրավորաձեւերի համարժեք: Ինչպե՞ս կարելի է տեղադրել ստացած իմաստը «Լնդարձակ Կորյունի» առաջին, խնդրո արառկա տեղիի մեջ: Ճանապարհներից մեկը՝ ենթադրել, որ այս բառախմբին հարող օժանդակ բայը ինչ-ինչ պատճառներով ձեռագրերից դուրս է ընկել: Երկրորդ, ավելի բարդ, սակայն, մեր կարծիքով, ավելի արդյունավետ ճանապարհը՝ հասկանալ իբրև հունաբանություն ոչ միայն «յանկարծ ուրեմն» արտահայտությունը, այլեւ դա պարունակող ամբողջ նախադասությունը: Փորձենք այն «վերաթարգմանել» հունարեն ամբողջությամբ, գիտակցելով, իհարկե, որ նմանատիպ հետթարգմանությունը որոշ շափով պայմանական է: Այնուհանդերձ, հունարեն հիմքի վերականգնումը, թեև զանազանակերպ է առանձին բառերի առումով, տեսանելի է դարձնում կայունը՝ շարահյուսական կառուցվածքը, նախադասության կմախքը: Այսպես.

յայնժամ = τότε

պատմէր = διηγήσατο

նոցա = τούτοις կամ ἐκείνοις

արբայն = ὁ βασιλεύς

վասն առն ուրումն = περὶ ἀνδρὸς τινος

ասորոյ եպիսկոպոսի = ἐπισκόπου Σύρου

ազնուականի = εὐγενοῦς կամ γενναίου

Դանիել անուն = ὄνομα կամ ὀνόματος Δανιήλ

կոչեցելոյ = [κλήθεντος]. բնական հունարենում նախորդ բառախմբի հետ մեկտեղ ավելորդ կհամարվեր

որոյ = οὗ կամ ᾧ (հարաբերական դերանվան սեռականը կամ տրականը)

յանկարծ ուրեմն [+ օժանդակ բայ] = εὐρεθῆναι (անցյալ կատարյալի կրավորականի անորոշ դերբայ, որը թելադրված է accusativus cum infinitivo՝ «հայցականը անորոշի հետ» կառուցով. այս վերջինը, իր հերթին, պայմանավորված է գլխավոր նախադասության «պատմէր» բայի առկայությամբ)

նշանագիրս = τὰ στοιχεῖα կամ τὰ γράμματα կամ τὰ σημεῖα: Հունարեն համարժեքներից վերջին երկուսը նշանակում են ոչ միայն «տառ», այլև «գրավոր նիշ», «գրություն»: Հաջորդ «աղփաբետաց» բառը հայերենում ավելացվել է, հավանաբար, ցույց տալու համար, որ խոսքը հենց տառանշանների մասին է: Այս լրացուցիչ պարզաբանումը հարկավոր էր, թերեւս, այն պատճառով, որ հայերեն «նշանագիր» բառը ինքը կարող է նշանակել «գրություն» (տես ՆԲՀԼ, «նշանագիր» II և III):

աղփաբետաց = [τῶν ἀλφαβήτων]. նախորդ «նշանագիրս» բառի հետ հավելագրություն տալովորություն է թողնում. դասական հունարենում բառը չէր գործածվում. խիստ կասկածելի է նաեւ դրա հոգնակի թիվը³⁰:

հայերէն = τῆς Ἀρμενιακῆς կամ τῶν Ἀρμενίων

լեզուի = γλώττης / γλώσσης

Ինչպես վերը տեսանք, «յանկարծ ուրեմն» արտահայտությունը օժանդակ բայի անցյալի հետ դիմավոր ձեւի իմաստ է ձեռք բերում («գտնվեց», «գտնվել է»), ընդ որում տվյալ հունարեն բայաձեւը, վերածվելով հայերենի, վերաբաշխվում է մակբայական («յանկարծ ուրեմն») և բայական («լինել» բայի դիմավոր ձեւը) խմբի միջև այնպես, որ օժանդակ բայը ստանում է անցյալ կատարյալի և համապատասխան դեմքի ցուցիչները, իսկ կրավորական սեռի իմաստը, առանց քերականական արտահայտման, փոխանցվում է մակբայներին: Պահպանելով այս բաշխումը, նույն բայի կրավորական անցյալի անոթը ձեւը տառացի թարգմանելու համար օժանդակ բայը պետք է դնել անցյալի անոթը ձեւով, սակայն այսպիսին հայերենում գոյություն չունի: Թարգմանիչն անորոշ ձեւի արտահայտման համար թողնում է մակբայական խումբը առանց օժանդակ բայի, զոհաբերելով նաեւ անցյալի իմաստը, քանի որ այն առկա է արդեն գլխավոր նախադասության «պատմէր» բայաձեւում: Մյուս կողմից, վերականգնելով անորոշ դերբայի կրավորական ձեւը, մենք դրանով բացառում ենք «որոյ» դերանվան ենթակա լինելու հնարավորությունը: Այս պարագայում «որոյ» կարելի է մեկնաբանել որպես ներգործող անուղղակի խնդիր («գործող անձ» կրավորական կառուցում). հունարենը կարտահայտէր այն ὑπό նախդիրով և սեռական հոլովով, այսինքն՝ տվյալ դեպքում որպես ὑφ' ὧν, իսկ ὑφ' ὧν εἰρηθῆναι հատվածը պետք է հասկանալ «որի կողմից գտնվել են» ձեւով: Հնարավոր է, սակայն, վերականգման երկրորդ տարբերակը՝ «ստացական տրականը» (dativus possessivus), որը ցույց է

³⁰ TLG 6.01 (1997)՝ «Հունարեն լեզվի համաբարբառ» տվյալների հեմֆոմ բառը վկայված է ընդամենը 14 անգամ, որից 13-ը՝ եզակի թվով, և միայն մեկ անգամ հոգնակիաձեւ, բայց վնասված բնագրում (Eriphanius, Panarion, ed. K.Holl, Bd.3, S.35, Z. 2, Leipzig: Hinrichs, 1933 (Die Griechischen christlichen Schriftsteller 37) = PG 42, Haer. 66, 48C):

տալիս խոսքի առարկայի «ուժ մոտ» լինելը, հանդիպելը, հայտնվելը են. էթե խոսքը անձի մասին է, ապա այն սովորաբար ուղեկցվում է *παρά* նախդիրով. ուստի եւ *παρ*՝ $\tilde{\omega}$ էնթեթինαι պետք է թարգմանել «որի մոտ գտնվեցին, գտնվել են»:

Ի մի բերելով այս վերաթարգմանությունը, ստանում ենք մոտավորապես հետևյալը.

τότε διηγήσατο τούτοις ὁ βασιλεύς περὶ ἀνδρός τι-
νος ἐπισκόπου Σύρου εὐγενοῦς || γενναίου ὄνομα Δανιήλ, ὕφ' οὗ || *παρ*՝
 $\tilde{\omega}$ εὐρεθῆναι τα σημεῖα τῆς τῶν Ἀρμενίων γλώττης,

այսինքն՝

«Այդ ժամանակ պատմեց նրանց արքան ինչ-որ ազնվական այրի, Դանիել անունով ասորի եպիսկոպոսի մասին, որի կողմից գտնվել են || որի մոտ գտնվել են հայոց լեզվի նշանագրեր»:

Այժմ համեմատենք վերականգնված հատվածը Փարպեցու համապատասխան վկայության հետ: Փարպեցին շեշտը դնում է նշանագրերի պատահաբար գտնվելու վրա, լուռության մատնելով Դանիելի՝ այս գործում կատարած դերը: Ինչ-որ մեկը նշանագրեր է տեսել ինչ-որ եպիսկոպոսի մոտ, եւ ուրիշ ոչինչ³¹: Հետաքրքիրն այստեղ այն է, որ Փարպեցու վերապատման մեջ տեղ գտած «առ որում նշանագիրք ... կային»³² արտահայտությունը, թարգմանված լինելով հունարեն, ընդունում է *παρ*՝ $\tilde{\omega}$ ἦν (ἦσαν) τὰ γράμματα *ձեւը, որը խիստ նման է մեր վերականգնված հատվածի «ստացական տրականի» տարբերակին: Նա համարյա թե նույնն է նշանակում, ինչ եւ *παρ*՝ $\tilde{\omega}$ էնթեթինαι τὰ γράμματα հատվածը, այն փոքր երանգային տարբերություններ, որ վերջին դեպքում խոսքի առարկայի պատկանելությունը անակնկալ է խոսողի համար: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Ղազար Փարպեցու դեպքերի մեկնաբանման յուրօրինակությունը բացատրվում է ոչ թե նրա «ասորատյացությունը», այլ նրանով, որ նա, մեզ անհայտ հանգամանքների բերումով, գիտակցել է «Կորյունի» քննվող դրվագի հունաբանությունը եւ այնտեղից քաղած տեղեկություններն արտահայտել է ավելի բնական լեզվով, քան թե «Վարքի» հետագա մշակողները: Ուշագրավ է նաեւ, թե ինչպես է արտացոլվում «Պատմության» մեջ մեր վերականգնված տեղիի երկրորդ կասկածելի արտահայտությունը: Կորյունի բնագրում Դանիելի նկատմամբ կիրառվում է «ազնուական» մակդիրը: «Ազնուական» բառի հունարեն համարժեքները, որոնք, ինչպես եւ հայերեն բառը, բնութագրում են ոչ միայն ծագումը, այլեւ բարոյական արժանիքները՝ *εὐγε-**

³¹ Ղազար Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեանց, Տփղիս, 1904, էջ 14, տող 13-14:

³² Նույն տեղում, տող 32-33:

νῆς եւ γενοαῖος են: Մինչդեռ Փարպեցին Դանիելին նկարագրում է «բարեպաշտ»³³ մակդիրով, այսինքն, հունարեն թարգմանություններում, εὐσεβής կամ ὅσιος: Եթե Փարպեցին եւ «Ընդարձակ Կորյունի» հեղինակը օգտվել են միեւնույն աղբյուրից, ապա նրանք պետք է տեսնեին εὐγενής կամ εὐσεβής՝ բնական հունարենում «եպիսկոպոս» բառին հավասարապես շափագանց հագվադեպ հարող մակդիրներից մեկը³⁴: ΕΥΣΕΒΗΣ-ի եւ ΕΥΓΕΝΗΣ-ի գծագրությունը տարբերվում է շատ չնչին, եթե նկատի առնենք, որ վաղ ձեռագրային «սիգման» հաճախ գրվել է ոչ թե Σ, այլ երկար երկանկյուն C ձևով, իսկ Β/Ν շփոթելի է միմիանց հետ, եթե վնասված են տառերի մեջտեղերը: Այնուամենայնիվ, թվում է, որ «բարեպաշտ»՝ εὐσεβής բնութագիրը հոգեւոր անձի նկատմամբ ավելի հարիր է:

II

«Ընդարձակ Կորյունում» կարելի է մատնանշել հունարեն բնագրի եւս մեկ հետք: Խոսքս նույնպես հանրահայտ բնագրագիտկան առեղծվածի մասին է:

Խոսելով իր «Վարքի» աղբյուրների եւ շարադրությունների սկզբունքների մասին, «Ընդարձակ Կորյունի» հեղինակը հայտարարում է³⁵.

Ոչ սուտապատում ճարտարախոս եղեալ առ ի մերոց բանից գհօրէն իմոյ կարգեցաք, այլ զյաճախագոյնն թողեալ եւ ի նշանաւոր գիտակացն քաղելով զհամառօտս կարգեցաք, որ ոչ միայն մեզ, այլ եւ որ զմատեանս ընթեռնուն՝ յայտնի է:

Իրականում «ի նշանաւոր գիտակացն քաղելով զհամառօտս» բառախմբի փոխարեն բոլոր ձեռագրերում կարդացվում է «ի նշանադիմակացն փակելով զհամառուրս», իսկ «զմատեանս» բառի փոխարեն՝ ձեռագիրը տալիս «զյատեանս», ձվ՝ «զատեանս»: Մ. Աբեղյանը, բնագիրը համարելով աղավաղված, շտկում է նախագասություն խրթին տեղերը ըստ Սուտ Կորյունի՝ իր կողմից ավելացնելով «քաղել» սրբագրությունը, որը, ինչպես կտեսնենք վարը, հուշվել է Ագաթանգեղոսի բնագրով: Այսպիսով միտքը, կարծես թե, պարզվում է, սակայն անմիջապես հակասություն է առաջանում ավելի խոշոր հատվա-

³³ Նույն տեղում, տող 32:

³⁴ Թվարկած հունարեն ածականներից «եպիսկոպոս» (եւ «արքեպիսկոպոս») բառերի հետ կապուն կապակցություն է ստեղծում միայն ὅσιος մակդիրը (ավելի քան 300 վկայված բնագրային օգտագործում, մեծ մասամբ աիեգերական ժողովների կանոններում): Ինչպես ցույց է տալիս TLG տվյալների հեմբը, γενοαῖος-ը այս գոյականի հետ չի կապակցվում, εὐγενής-ը բնութագրում է եպիսկոպոսներին ընդամենը մեկ անգամ, երկու անգամ եպիսկոպոսին շնորհվում է εὐσεβής մակդիրը:

³⁵ Կորյուն, 1981, էջ 146, տող 2-5 եւ տողատակ:

ծում: Պարբերության սկզբում Կորյունը հավաստիացնում է ընթերցողին, որ գրել է իր պատմությունը «ոչ եթե ի հին համբաւուց տեղեկացեալ... այլ որոց մեր իսկ ականատես եղեալ ... եւ լսող, եւ...արբանեակ»³⁶: Անմիջապես սրանից հետո խոստովանել, որ պատմության հիմնական աղբյուրն, այնուամենայնիվ, ուրիշների վկայություններն են (որքանով էլ հեղինակավոր եւ գիտուն լինեն այդ «ուրիշները»), նշանակում է ինչ-որ չափով նվազեցնել սեփական աշխատության արժեքը³⁷: Եթե պատմագիրը իր նկարագրած անցուդարձերի ականատեսը չէ, ապա նա, բնականաբար, օգտվում է այլ անձանց բանավոր եւ գրավոր հուշերից: Այսպես, օրինակ, Սոկրատես Աքուլաստիկոսն իր «Եկեղեցական պատմության» առաջին գրքի նախաբանում ասում է. «Մենք կսկսենք այն [իրադարձություններից], որոնք նա [այսինքն՝ նախորդ պատմագիրը – Օ. Վ.] բաց է թողել, առանց ճշտմամբանությունը հոգալու, այլ շարագրելով այն, ինչ գտել ենք գրավոր [ձեռով] կամ լսել ենք պատմողներից»³⁸: Մինչդեռ ականատեսը դրա կարիքը չունի: Նա գրում է, գործածելով սեփական հիշողությունը կամ իր իսկ ձեռքով ժամանակին արած գրառումները:

«Հայկազեան» բառարանի հեղինակներին մեզ հետաքրքրող տեղին քաջ ծանոթ էր իր սկզբնական տեսքով: «Համատուրք» - գրում են բառարանագիրները, - «տուրք կամ ձիրք եւ հանգամանք համեմատ, եւ կամ աւանդեալք ի հասարակաց վկայութենէ»: Իսկ «նշանադիմակ՝ նշանաւոր եւ երեւելի դիմօք կամ դիմաց ամենեցուն ակներեւ, հոյակապ, հոշակաւոր (իբր. անցք)»: Եվ այստեղ գալիս է ամենահետաքրքիրը. «Ի ... նշանադիմակաց քաղելով գհամատուրսն կարգեցաք»: Կորինն ըստ Ագաթանգեղոսի, որ պակասի այժմ ի հ[ա]յ, այլ կայ ի յ[ոյ]ն ըստ իմաստից, որ ի լ[ա]տ[ին] պարզի այսպես. Զնշանաւորսն ի կիր արկաք յօրինուածով քաղեցելով յօգտակարագունիցն»: Այս ամենը նշանակում

³⁶ Նույն տեղում, էջ 145, տող 19 - 146, տող 1:

³⁷ Այդպես, ի դեպ, վարվում է հունարեն «Գրիգորի վարքի» հեղինակը (գլուխ 199, G. Garritte, Documents pour l'étude du livre d'Agathange, Citta del Vaticano, 1946, p. 116). «Իմ այս ամբողջ շարադրանքը նշմարիտ է, քանզի ես դեպքերի մի մասի մասնակից եմ եւ ականատեսը: Մյուսների մասին լսել եմ վստահելի մարդկանցից» (թարգմ. Հր. Բարթիկյան, տե՛ս Հ. Մ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հատ. I, Երեւան, 2002, էջ 180): Նույնը կարելի է տեսնել «Վարքի» արաբական թարգմանության բնագրում (I. Ī ādḏ, Êdāū āī ēā Ādī yī, Ādōçēī, Āādāçī ā è Āēāī ī ā nāyōū ī Ādēāī dēāī (Ādāāñēāy āāñēy), NĪ ā, 1905, n. 148): Երկու բնագրերի զուգընթացը, ինչպես եւ դրա տարբերությունը Ագաթանգեղոսի մեզ հետաքրքրող տեղիից նկատել է Ա. Տեր-Վեոնոյանը (տե՛ս Հ. Մ. Բարթիկյան, նույն տեղում):

³⁸ Τὴν ἀρχὴν ἐξ ὧν ἐκέλευσ ἀπέλιπεν ποιησόμεθα, οὐ φράσεως ὄγκου φροντίζοντες, ἀλλ' ὅσα ἢ ἐγγράφως εὔρομεν ἢ παρὰ τῶν ἱστορησάντων ἠκούσαμεν διηγούμενοι (Socr.I.3; **Socrates Scholasticus**, Kirchengeschichte, hrsg. von G.Ch.Hansen, mit Beibragen von M.Schirinjan, Berlin, Akademie Verlag, 1995 (Die griechischen christlichen Schriftsteller der ersten Jahrhunderte: N. F., Bd. 1), S.1).

է, որ Կորյունի տեղիի իմաստը վերականգնելու համար մենք կրկին պետք է դիմենք Ագաթանգեղոսի հունարեն եւ հայերեն բնագրերի զուգարուծյանը: Հայերենը³⁹ տարբերվում է Կորյունից նրանով, որ բացակայում է «գհօրէն իմոյ կարգեցաք» բառախումբը, առեղծվածային «ի նշանադիմակաց եւն» հատվածի փոխարեն առկա է Սուտ Կորյունի տարբերակը «ի նշանաւոր գիտակաց քաղելով զհամառօտս», իսկ նախադասութիւն վերջը ուղղված է թագավորին. «որք ոչ մեզ միայն, ո՛վ թագաւոր, այլ յորժամ քո առաջի զմատեանդ ընթեռնուցուն, յայտնի է»: Հունարենը հետեւյալն է⁴⁰.

... οὐ ψευδολογήσαντες μυθω-
δῶς ἐκ τῶν ἡμετέρων λόγων. Πλείσ-
τα δὲ καταλιπόντες τῆ συντομία,
τοῖς ἐπισημοτέροις ἐχρησάμεθα,
συλλέξαντες τῶν χρησιμωτέρων
τὴν σύνθεσιν⁴¹. Ὅπερ οὐχ ἡμῖν μό-
νοις, ὦ βασιλεῦ, ἀλλ ὅταν καὶ ἐπὶ
τοῦ σοῦ κράτος· τόμος ἀναγνωσθῆ,
πάντα⁴² ἔκδηλα⁴³ γενήσεται...

...առանց սուտ առասպելներ
պատմելու մեր խոսքով: Թողնելով
մեծ մասը համառոտված ձևով
մենք օգտվեցինք ամենանշանա-
վորներից, ամենաօգտավետներից
հավաքելով շարադրությունը: Որն ոչ
մեզ միայն, ո՛վ թագավոր, այլեւ երբ
Քո Էշխանութիւնդ համար վերձան-
վի հատորը, ամեն ինչ պարզ կլինի...

Մենք գիտակցաբար թարգմանում ենք հունարենը բառացի, փորձելով
ցույց տալ, որ այս բնագիրը նույնպես կամ աղավաղված է, կամ կազմվել է
հունարենից դժվարացող հեղինակի կողմից (կամ երկուսն էլ միասին): Բացի
այդ, այս տարօրինակ հատվածը հայերենին համընթաց չէ. «Թողնելով մեծ մա-
սը համառոտված ձևով, մենք օգտվեցինք ամենանշանավորներից, ամենաօգ-
տավետներից հավաքելով շարադրությունը» նախադասութիւնը հայերենում
համապատասխանում է «գլաճախագոյնն թողեալ, եւ ի նշանաւոր գիտակացն
քաղելով զհամառօտս կարգեցաք» տեղին: Դժվար չէ տեսնել, որ «ի նշանաւոր
գիտակացն» համապատասխանում է հունարենի «ամենանշանավորներից»,
«համառօտս» փոխում է իր տեղը, փոխարինելով «ամենաօգտավետին», «քա-
ղել» բայի իմաստը ստանում է «օգտվեցինք ... հավաքելով» բայի եւ դերբայի
կապակցությունը, իսկ «կարգել» բայի իմաստի մասնակի արտահայտությունը
փոխանցվում է «շարադրություն» գոյականին: Հայերենի ընդհանուր տարբե-
րությունը հունարեն բնագրից այն է, որ տրամաբանական շեշտը անցնում է

³⁹ Ագաթանգեղոս, 897 (էջ 470):

⁴⁰ Agathange, p.172.

⁴¹ Var. II. καὶ χρησιμωτέροις ἐν τῆ συνθέσει χρησάμενοι καὶ χρησιμωτέροις ἐν τῆ
συνθέσει τῶν λόγων ἐχρησάμεθα.

⁴² Var.I. πάντα.

⁴³ Var.I. ἔκδηλον.

«համառոտի» վրա, իսկ «օգտավետը» իսպառ բացակայում է: Ահա այս բացի մասին են խոսում «Հայկազեան» բառարանի կազմողները, եւ դրան հավասարեցնում են Կորյունի «ի նշանադիմակաց քաղելով (իրականում «քակելով») զհամատուրս» բառախումբը: Սակայն հավասարեցման հիմքը մնում է անհայտ:

Փորձենք թարգմանել Կորյունի հատվածը հունարեն: «Համատուրք» գոյականը բաղկացած է երկու մասից՝ «համա-» նախածանցից, որը սովորաբար հունարեն թարգմանություններում համապատասխանում է ՏՄՆ՝ նախածանցին եւ դրա ՏՄՄ, ՏՄԼ, ՏՄ՝ տարբերակներին (օրինակ՝ Σύμβουλος - «համախոհ»): «Տուր» արմատը սովորաբար, հատկապես անձնանուններում, համապատասխանում է δωρ- արմատին (օրինակ՝ Θεόδωρος - Աստվածատուր), սակայն «տուրք» որպես առանձին բառ համապատասխանում է հունարեն ὀφείδος բառին: Կապելով նախածանցներն արմատների հետ, մենք արդյունքում ստանում ենք միակ իմաստավորված բառը՝ Σύμφορος ածականը, որը եւ նշանակում է «հարմարավետ, օգտավետ, պիտանի»:

Ինչ վերաբերում է «նշանադիմակ» բառին, ապա նա բարդված է երկու արմատներից, որից երկրորդը նԲՀԼ բացատրում է հետեւյալ կերպ. «դէմ, դէմք, երես, տեսիլ, կերպարան. տեսակ, կերպ. պատրուակ, առ երեսս ձեւացեալ կերպարան»: Այս բոլոր նշանակությունների իմաստային «կորիզը»՝ «որեւէ բան քողարկող եւ միաժամանակ բացահայտող մակերեսն» է: Ի՞նչ կնշանակի այդ դեպքում նշանների համար հատկացված, կամ նշաններ սքողող, կամ նշաններով պատած, կամ նշաններին որեւէ այլ կերպ առնչվող «երես»: Պարզ է, որ դա ինչ-որ հարթ առարկա է, որը հատկացված է գրելու համար՝ մոմպատ կամ կավե տախտակ, մագաղաթի, քարտիսի կամ թղթի կտոր, իսկ փոխաբերաբար՝ որեւէ գրառում առհասարակ: Հունարենում «գրառում» նշանակող բառերից կարելի է մատնանշել հատկապես τὸ σημεῖον «գրավոր նշում», ἢ σημείωσις «գրի առած դիտում, ծանոթագրություն, նշում», τὸ σχεδᾶριον «նախնական գրառում, սեւագրություն»: Առաջին ու վերջին բառերը կարող են գործածվել միասին. այսպես, Եպիփան Կիպրացու «Հավատամքի բացատրություն» գործում⁴⁴ առկա է δια...σημείων καὶ σχεδᾶριων...γράφαι («գրել ... նշումներով եւ ուրվագիծ գրառումներով») արտահայտությունը: Գոյություն ունի նաեւ «մեղրամոմով պատած գրատախտակ» ἢ δέλτος բառը, որը հաճախ գործածվել է նաեւ տարբեր «գրությունների» իմաստով «նամակ, հրովարտակ, կտակ, աշխատություն» եւ մի քանի այլ նույնիմաստ բառեր:

Վերջապես, «քակել» («քակտել, քայքայել. բաժանել, լուծանել, ցրել»)

⁴⁴ Epiphanius Expositio fidei, 25 (MPG 42. 832C).

բառի հունարեն համարժեքներից մի քանիսը բերում են իրենք՝ «Հայկազեան»-ի հեղինակները՝ καθαιρέω, καταλύω, διαλύω, παραλύω: Այս շարքում լնւ «լուծանել» բայի նախածանցված ձեւերից բոլորը նշանակում են «ավերել», մինչդեռ καθαιρέω «ջարդել, ավերել» բայի հիմքում ընկած է αἰρέω, որի նշանակութունը բաղկացած է երկու ճյուղավորվող իմաստային շարքերից. առաջին՝ «հիմքից պոկել, ավերել, ջարդել», եւ երկրորդ՝ «քաղել, ընտրել»: Հետաքրքիր է նաեւ, որ αἰρέω բայի նախածանցված ձեւերից մեկը (ընդհանուր հաշվով դրանք տասնհինգ են), սυναίρέω բայը ունի «հավաքել, միացնել, կապակցել», բայց եւ «համառոտել» իմաստը: Այսպիսով, «ի նշանադիմակացն քակելով՝ զհամատուրս կարգեցաք» կարելի է մտաւորապէս վերականգնել

ἀπό τῶν δέλτων (σημειώσεων, σημείων, σχεδारीων) συνελόντες⁴⁵ τὰ σύμφορα κατετάξαμεν (συνέθεμεν)

ձեւով եւ թարգմանել՝ «նշումներից համառոտված ձեւով հավաքելով ամենապիտանին, շարադրեցինք»:

Սա իսկապէս նույնիմաստ է Ագաթանգեղոսի վերոբերյալ տեղիի հետ, եւ կարող է ունենալ հետաքրքիր տարբերութիւններ շարունակութիւն մեջ.

«որ ոչ միայն մեզ, այլ եւ որ զմատեանս ընթեռնուն՝ յայտնի է»:

«Որ» հարաբերական դերանունը այս նախադասութիւն մեջ կարող է կապակցված լինել միայն «օգտավետի» հետ, այսինքն պետք է նույնպէս դրվի շեղոք սեռի հոգնակի թվով. օ:

«Միայն» բառը կարող է վերաբերել «մեզ» դերանվան. այս դեպքում նա թարգմանվելու է այնպէս, ինչպէս կա հունարեն Ագաթանգեղոսում. ἡμῖν μόνονοις, ստանալով «միայն մեզ» իմաստը: Սակայն կարելի է, պահպանելով նաեւ հայերեն հատվածի շարադասութիւնը, կապել «միայն»-ը արգելափակ մասնիկի հետ՝ μὴ μόνον «ոչ միայն»:

«Յայտնի է» ստորոգյալի համար Ագաթանգեղոսի բնագրում մենք տեսնում ենք բաղադրյալ ապառնի՝ ἔκδηλα γενήσεται: Սակայն ոչ սահմանական ներկան, ոչ էլ ապառնին նախադասութիւն բավարար իմաստ չեն հաղորդում: Մինչդեռ մեր վերականգնած μὴ արգելափակ մասնիկի առկայութիւնն մեզ հուշում է, որ «Կորյունում» շոշափվող հունարեն բնագրի թարգմանիչը պետք է տեսնէր «հայտնել» ծղօն բայի ոչ թե սահմանական, այլ ըզձական կամ ստորադասական եղանակը: Եվ իսկապէս՝ ծղօն բայի ներկա ժամանակի սահմանական եւ ստորադասական եղանակի երրորդ դեմքի ձեւերը համանուն են՝ δηλοῖ, եւ այս պարագան կարող էր շփոթեցնել թարգմանչին:

⁴⁵ սυναίρέω բայի անցյալ կատարյալ ներգործական դերբայի ուղղական հոլովի հոգնակի թիվը:

ἄ μὴ μόνον ἡμῖν, ἀλλὰ καὶ ... δηλοῖ *հատվածը, կապված լինելով* τὰ σύμφορα «*օգտավետի*», «*պիտանի*»-ի *հետ, նշանակում է «օգտավետը, որը պետք է ոչ միայն մեզ, այլև [ինչ-որ մեկի համար]... հայտնի կամ պարզ լինի*»: «*Հայտնել*» բայի իմաստը պահանջում է, որ նախադասության երկրորդ մասում բացը լրացվի «*մեզ համար*» կապակցությունը զուգահեռ տրականով: «*Ընթեռնուն*» բայի համարժեքը՝ *անաγινώσκουσι* *δέκν* է (ներկայի ներգործականի հոգնակի թվի 3-րդ դեմք): Բայց այս նույն *δέκν* համաձայն է ներկայի ներգործական դերբայի արական կամ շեղոք սեռի տրական հոլովը, որը, գործող *անձ* նշանակելու համար, պետք է գործածվեր հոգով: Ուստի *μὴ μόνον ἡμῖν, ἀλλὰ καὶ τοῖς* *ἀναγινώσκουσι* *δηλοῖ* *նշանակելու է «որ ոչ միայն մեզ, այլև ընթերցողներին պետք է հայտնի կամ պարզ լինի*»:

Մնում է տեղադրել «*զմատեանս*», կամ «*զատեանս*», կամ «*զյատեանս*» ընթերցվածը: Հունարեն Ագաթանգեղոսը *անշուշտ* նկատի ունի «*զմատեանս*», քանի որ ունի «*հատոր*» ὁ τόμος. *եթե* *ընդունենք* Ագաթանգեղոսի տարբերակը, *ապա* *կստացվի* *τοῖς τὸν* *τόμον* *ἀναγινώσκουσι* *δηλοῖ* («*հատորն ընթերցողներին՝ վերծանողների համար պետք է հայտնի, պարզ լինի*»)⁴⁶: Հնարավոր են եւ այլ համարժեքներ «*մատեան*» բառի համար՝ *γραφαί*, *βιβλία* *են*: Սակայն *ավելի հետաքրքիր է «զյատեանս»* ընթերցվածը: Բանն այն է, որ Կորյունի *հետ* բազմաթիվ ոճական ընդհանրություններ ունեցող⁴⁷ *եվթաղի մեկնություն* հայկական թարգմանություն մեջ առկա է «*յատեան*» *ձևը, իսկ երկրի հունարեն բնագրում* *գրան համապատասխանում է ἐπὶ τοῦ βήματος*⁴⁸ («*ամբիոնում, ամբիոնի վրա*») *արտահայտությունը*: *եթե* *տեղադրենք* *այս նշանակությունը «զյատեանս»* *արտահայտություն մեջ, ապա «զ»* *նախածանցը* *պետք է հասկանալ* *ոչ միայն իբրև հայցականի ցուցիչ, այլ որպես հունարեն հոգի արտացոլում, որի միջոցով գոյականանում է ամբողջ արտահայտությունը*. *Τὸ, կամ, ավելի հավանական, հոգնակիաձե* *τὰ ἐπὶ τοῦ βήματος* *նշանակում է «այն բաները, որոնք ամբիոնում [են հնչում, ասվում, կարդաց-*

⁴⁶ Այսպես վերականգված տեղին զուգընթաց է Ագաթանգեղոսի վերջաբանում (Ագաթանգեղոս, 894) բերված Եսայիի եւ Ամբակումի մարգարէությանը. «Ա՛ն հարուեզ նոր մեծ եւ գրեա՛ ի նմա գրչաւ գրչի նարտարի» (Ես. Թ.1) եւ «Գրեա՛ գոեսիլդ ի տախտակի եւ ի գիր հաստատեա՛, գի որ ընթեռնուն՝ համարձակ ընթեռնուցուն» (Ամբակ. Բ, 2): Դս ավելի լավ է երեսում հունարեն բնագրից. λαβὲ σεαυτῶ τομὸν νέον μέγαν καὶ γράψον ἐν αὐτῶ γραφίδι γραμματέων εὶ γράψον τὴν ἕρασιν ταύτην ἐν πλαξίν καὶ ἐν βιβλίῳ ἵνα οἱ ἀναγινώσκουτες παρρησίᾳ ἀναγινώσωνται.

⁴⁷ Տե՛ս Ն. Բյուզանդացի, Կորին վարդապետ եւ նորին քարգմանութիւնք. Գիրք Մակարայեցոց, Երթաղ Աղեխանդրացի, Ագաթանգեղոս եւ Փաստոս Բիզանդ հանդերձ դիտողութեամբ, տեղեկութեամբ եւ լուսաբանութեամբ, Տիֆլիս, 1900, էջ 164-173:

⁴⁸ Մատենագրութիւնք Երթաղի. Քննություն եւ բնագիր. Յակոբյան Եսեբեայ Կեսարացոյ րոպր առ Կարպիանոս, հրատ. Ա. Վարդանեան, Վիեննա, 1930, էջ 87:

վում եւն]»: «Չլատեանս» ընթերցվածը ավելի բարդ է եւ ավելի հարուստ իմաստ է հաղորդում, ուստի եւ նախընտրելի է: Ինչ վերաբերում է «գատեանս» ընթերցվածին, ապա նա անիմաստ է, եւ կարող է հաշվի չառնվել:

Ամփոփելով, ստանում ենք հետեւյալ հատվածը.

ἀπο τῶν δέλτων (σημειώσεων, σημείων, σχεδारीων) συνελόντες τὰ σύμφορα κατετάξαμεν (συνέθεμεν), ἃ μὴ μόνον ἤμῃν, ἀλλὰ καὶ τοῖς τὰ ἐπὶ τοῦ βήματος ἀναγιγνώσκουσι δηλοῖ.

Պարզվում է, որ երկրորդական նախադասության բայի ստորադասական եղանակը թելադրված է ստորադասական հատկացուցչական նախադասության լրացուցիչ՝ նպատակային երանգի հավելմամբ: Վերջնական թարգմանությունը սա է.

«նշումներից համառոտված ձևով հավաքելով պիտանին (օգտավետը), շարադրեցինք այն <այնպես>, որ պարզ լինի ոչ միայն մեզ, այլեւ նրանց <համար>, ովքեր վերձանում են ամբիոնում <հնչող բաներ>»:

Վերջին հայտարարությունը կարելու է նրանով, որ ցույց է տալիս «Ընդարձակ Կորյունում» հետք թողած բնագրի՝ մասնագիտացած վերձանողների կողմից հրապարակավ ընթերցանելու համար հատկացված լինելը: Այս առիթով նույնպես ուշագրավ է Փարպեցու վկայությունը «Կորյունի» մասին: Մաշտոցի վարքի եւ նշանագրերի գյուտի մասին գրվագի հավաստիությունը ստուգելու համար նա խորհուրդ է տալիս. «ի պատմութենէ գրոց ...Կորեան ... կարդացեալ տեղեկացի»⁴⁹. մի արտահայտություն, որ կարելի է հասկանալ որպես «թող կարդալով տեղեկանան Կորյունի գրերի պատմութունից»: Այդ դեպքում հասկանալի է դառնում նաեւ Փարպեցու՝ իր իսկ մասին հաղորդածը. «ուստի եւ մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հաւաստեալ»: Դժվար է պատկերացնել, որ փոքրիկ գրքուկից գրերի գյուտի մասին տեղեկություններ քաղելու համար հարկ է եղել կարդալ այն «բազում անգամ»: Եթե, սակայն, մենք հասկանանք «կարդալը» ոչ «ռամկօրէն», ինչպես հրահանգում են «Հայկագեան»-ի հեղինակները՝ Փարպեցու միայն այս նախադասության վերաբերյալ, այսինքն՝ ոչ որպես «անհատական ընթերցում», այլ ավելի ընդունված «վերձանություն» իմաստով, ապա «բազում անգամ կարդալը» կհաստատի մեր՝ Կորյունի վերջին վերականգված հատվածի իմաստը: Ղազար Փարպեցուն ծանոթ բնագիրը պարբերաբար հնչում էր եկեղեցում եւ նրան կարելի էր ծանոթանալ՝ վերձանելով կամ ունկնդրելով այն տոնական օրերին:

⁴⁹ Ղազարայ Փարպեցայ Պատմութիւն Հայոց..., էջ 13, տող 21-22: